## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՍԱՐԱԼԱՆՋ ԵՎ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «09»-Ը ՀՈՒՆԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ N «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-26/66» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ք. Արթիկ* *«03» հուլիսի 2026թ*

«ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանի, որը գործում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վահրամ Կնյազյան»Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Վահրամ Կնյազյան-ի, որը գործում է անհատ ձեռնարկատիրոջ անունից (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր», ցուցաբերելով երկկողմանի կամահայտնություն, Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 469-րդ հոդվածի 1-ին կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով կնքեցին սույն համաձայնագիրը կնքեցին «15»-ը հունիսի 2026թ-ին կնքված ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքի կարիքների համար՝ Գետափ բնակավայրի ոռոգման համակարգի կառուցման շինարարական աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ N «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-26/66» ծածկագրով գնման պայմանագրում հետևյալ փոփոխությունները կատարելու վերաբերյալ.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հիմք ընդունելով ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի և «Վահրամ Կնյազյան»Ա/Ձ-ի, միջև «15»-ը հունիսի 2026թ-ին կնքված ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար՝ Գետափ բնակավայրի ոռոգման համակարգի կառուցման շինարարական աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների N «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-26/66» ծածկագրով պայմանագրի 7.5 և 7.15 կետերը Կողմերը որոշեցին.

**1.1** Պայմանագրի հավելված N2 վճարման ժամանակացույցի աղյուսակը փոխարինել հետևյալ աղյուսակով. (հավելված N3)

**1.2** Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**2.1** Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

**2.2** Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**2.3** Պայմանագրով ամրագրված և սույն համաձայնագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

**2.4** Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ՇՄ Արթիկի Համայնքապետարան | «Վահրամ Կնյազյան»Ա/Ձ |
| Հասցե՝Ազատության հրապարակ 1 | Հասցե՝ ՀՀ ՇՄ ք. Արթիկ Բաղրամյան 1/2 |
| ՀՎՀՀ 05553661 | ՀՎՀՀ 61718934 |
| Բանկ՝ՀՀ ՖՆ Գործառ Վարչություն | Բանկ՝ «Ակբա Բանկ»ԲԲԸ |
| Հ/Հ 900202267077 | Հ/Հ 220309604959000 |
| Համայնքի ղեկավար՝ | Տնօրեն՝ |
| Ա. Ոսկանյան ________ (ստորագրություն) Կ.Տ. | Վ.Կնյազյան ________ (ստորագրություն) Կ.Տ. |

*Հավելված N 3*
*«09»-ը հունիսի 2026թ. կնքված*
*«ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-26/66» ծածկագրով*
*պայմանագրի համաձայնագիր N1*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

*ՀՀ դրամ*

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, փաստացի մատուցված ծառայությունների դիմաց այդ թվում… | | | | | | | | | | | | |
| | | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 3 | 71351540/3 | ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար՝ Գետափ բնակավայրի ոռոգման համակարգի կառուցման շինարարական աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ: | Համայնքի մասնաբաժին | | | | | | 276 500 | 276 500 | 276 500 | 276 500 | 276 500 | 276 500 | 790 000 |
| | | | Պետության մասնաբաժն 513 500 | | | | | | | | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ՇՄ Արթիկի Համայնքապետարան
Հասցե՝Ազատության հրապարակ 1
ՀՎՀՀ 05553661
Բանկ՝ՀՀ Ֆն Գործառ Վարչություն
Հ/Հ 900202267077
Համայնքի ղեկավար՝

Ա. Ղուկասյան ____________________
(ստորագրություն) Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Վահրամ Կնյազյան»Ա/Ձ
Հասցե՝ ՀՀ ՇՄ ք. Արթիկ Բաղրամյան 1/2
ՀՎՀՀ 61718934
Բանկ՝ «Ակբա Բանկ»ԲԲԸ
Հ/Հ 220309604969000
Տնօրեն՝

Վ.Կնյազյան ________________
(ստորագրություն) Կ.Տ.